«ԹԱՓՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» և «ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԹԱՓՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Թափոնների մասին» 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-159-Ն օրենքը (այսուհետ՝ Օրենք) օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին հոդվածով.

«Հոդված 21.1. Ավտոտրանսպորտային միջոցների օգտահանման վճարի առանձնահատկությունները

1. Հայաստանի Հանրապետություն ներկրվող կամ Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ավտոտրանսպորտային միջոցի (թափքի), ինքնագնաց մեքենայի և նրանց կցորդների համար (այսուհետ՝ տրանսպորտային միջոցներ), բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասում նշված տրանսպորտային միջոցների, վճարվում է օգտահանման վճար՝ էկոլոգիական անվտանգության, ինչպես նաև մարդու առողջության պաշտպանության և տրանսպորտային միջոցների շահագործումից առաջացող շրջակա միջավայրի վրա վտանգավոր ազդեցության կանխարգելման նպատակով, հաշվի առնելով տրանսպորտային միջոցի տեխնիկական առանձնահատկությունները և մաշվածությունը:

2. Տրանսպորտային միջոցների տեսակները և դասերը, որոնց նկատմամբ վճարվում է օգտահանման վճար, հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Սույն հոդվածով սահմանված օգտահանման վճար վճարողներ են համարվում ֆիզիկական անձինք, անհատ ձեռնարկատերերը կամ կազմակերպությունները, որոնք՝

- իրականացնում են տրանսպորտային միջոցների ներմուծում

Հայաստանի Հանրապետություն.
- Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնում են տրանսպորտային միջոցների արտադրություն.
- Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք են բերել տրանսպորտային միջոցներ այն անձանցից, որոնք սույն հոդվածի 6-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ չեն վճարում օգտահանման վճար, կամ անձանցից, որոնք սույն հոդվածի պահանջների խախտումով չեն վճարել օգտահանման վճար,
- հանդիսանում են տրանսպորտայի միջոցների սեփականատերեր, որոնց նկատմամբ օգտահանման վճարը չի վճարվել՝ համաձայն սույն հոդվածի 6-րդ կետի 5-րդ պարբերության, երբ նշված տրանսպորտային միջոցները տեղակայվել են ազատ մաքսային գոտուց մեկ այլ մաքսային գոտի, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի տրանսպորտային միջոցները ենթակա են մաքսային ընթացակարգով վերաարտահանման:

4. Օգտահանման վճարի գանձման կարգը, այդ թվում՝ դրա հաշվարկման, վճարման, բռնագանձման, վերադարձի և վճարի ավել վճարման կամ ավել բռնագանձման, ինչպես նաև օգտահանման վճարի չափերի և հաշվարկման, լիակատարության և ժամանակին Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ճշտության նկատմամբ վերահսկողության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Օգտահանման վճարի չափի սահմանման ժամանակ հաշվի են առնվում տրանսպորտային միջոցի թողարկման տարեթիվը, նրա քաշը և այլ ֆիզիկական հատկանիշներ, որոնք ազդեցություն ունեն թափոնների շրջանառության հետ կապված գործունեության հետ՝ պայմանավորված տրանսպորտային միջոցների սպառողական հատկությունների կորստով:

6. Օգտահանման վճարը չի վճարվում այն տրանսպորտային միջոցների համար՝

- որոնց ներմուծումը Հայաստանի Հանրապետություն իրականացվում է որպես ֆիզիկական անձանց անձնական գույք, որոնք հանդիսանում են հայրենադարձության ծրագրի շրջանակներում շահառու, կամ սահմանված կարգով ճանաչվել են որպես փախստական,
- որոնք ներկրվում են Հայաստանի Հանրապետություն և պատկանում են դիվանագիտական ներկայացուցչություններին կամ հյուպատոսական հաստատություններին, միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին համաձայն արտոնություններից և անձեռնմխելիությունից օգտվող միջազգային կազմակերպություններին, ինչպես նաև այդպիսի ներկայացուցչությունների, հաստատությունների և կազմակերպությունների աշխատակիցներին և նրանց ընտանիքի անդամներին,
- որոնց թողարկման տարեթվից անցել է երեսուն և ավել տարի, որոնք չեն օգտագործվում առևտրային նպատակներով, ունեն ինքնօրինակ շարժիչ, թափք և հենոց (առկայության դեպքում), պահպանված են և բերված են օրիգինալ վիճակի, որոնց տեսակները և դասերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից,
- որոնց թողարկման տարեթվից չի անցել երեք տարի և որոնք

տեղակայվում են ազատ մաքսային գոտու սահմաններում և որոնց տեսակները և դասերը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, բացառությամբ միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները,

- որոնք ներկրվում են Հայաստանի Հանրապետություն և տեղակայվում են ժամանակավոր ներկրման (թույլտվության) մաքսային գործընթացում:

7. Տրանսպորտային միջոցների տեխնիկական անձնագրերը (տրանսպորտային միջոցների ամրաշրջանակների անձնագրերը), ինքնագնաց մեքենաների և այլ տեսակի տեխնիկայի անձնագրերը տրվում են համաձայն Եվրասիական տնտեսական միության իրավունքի:

8. Պետական բյուջեի միջոցների հաշվին համապատասխան չափերով և կարգով, որոնք սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից, փոխհատուցվում են կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ծախսերը, որոնք առաջացել են գործունեության ընթացքում իրենց սպառողական հատկությունները կորցրած տրանսպորտային միջոցներից գոյացած թափոնների գործածությամբ, այդ թվում՝ այն ծախսերը, որոնք ուղղվել են տվյալ գործունեության համար համապատասխան հզորությունների և ենթակառուցվածքների ստեղծմանը:

9. Օգտահանման վճար չի գանձվում տրանսպորտային միջոցների այն սեփականատերերից (տիրապետողներից), որոնց նկատմամբ սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սահմանված է օգտահանման վճարը վճարելու պահանջ, իրենց սպառողական հատկությունները կորցրած տրանսպորտային միջոցներից գոյացած թափոնների փոխադրման պատճառով, կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից, որոնք իրականացնում են թափոնների գործածության հետ կապված գործունեություն, կամ վերջիններիս ներկայացուցիչներից:»:

Հոդված 2. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հոկտեմբերի 1-ից:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են մինչև 2025 թվականի սեպտեմբերի 1-ը:

Հանրապետության նախագահ **Վ. Խաչատուրյան**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 109-րդ հոդվածի 1.2-րդ մասում «և տվյալ տրանսպորտային միջոցի ներմուծման համար Օրենսգրքով սահմանված կարգով վճարված բնապահպանական հարկի հանրագումարի և» բառերը հանել։

Հոդված 2. Ուժը կորցրած ճանաչել Օրենսգրքի 171-րդ հոդվածի 1-ին մասի աղյուսակի հետևյալ տողերը՝

«8702, 8703, 8704, 8705	մինչև 3 տարի ներառյալ թողարկման (արտադրության) տարեթիվ ունեցող տրանսպորտային միջոցներ	2.
8702, 8703, 8704, 8705	3 տարուց ավելի մինչև 5 տարի ներառյալ թողարկման (արտադրության) տարեթիվ ունեցող տրանսպորտային միջոցներ	4.
8702, 8703, 8704, 8705	5 տարուց ավելի մինչև 10 տարի ներառյալ թողարկման (արտադրության) տարեթիվ ունեցող տրանսպորտային միջոցներ	6.0
8702, 8703, 8704, 8705	10 տարուց ավելի մինչև 15 տարի ներառյալ թողարկման (արտադրության) տարեթիվ ունեցող տրանսպորտային միջոցներ	12
8702, 8703, 8704, 8705	15 տարուց ավելի թողարկման (արտադրության) տարեթիվ ունեցող տրանսպորտային միջոցներ	24

Հոդված 3. Օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասում հանել «(բացառությամբ ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 8702, 8703, 8704 և 8705 ծածկագրերին դասվող ավտոմեքենաների)» բառերը։

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հոկտեմբերի 1-ից։

Հանրապետության նախագահ **Վ. Խաչատուրյան**